

GARDEN TOWER HOTEL

ՊԱՆԴՈՎ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՄՏԱՌՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱՎԱՅՐ

Լիբանանահայ բոլոր սերունդներու պատկանող արուեստագետներ, համախմբուելու նպատակով՝ իրենց անդրանիկ հանդիպումը կ'ունենան «Կարտըն Թաուրը» պանդոկին մէջ Յունիս 30, 1997-ին: Այդ թուականէն սկսեալ, երկու հարիւր ութսուն Երկուշաբթիներու ընթացքին, որպէս մշտական ֆորում Լիբանանահայ մտաւորականութեան, հոն արծարծուած են Սփիւռքահայութիւնը յուզող բազմաբնոյթ նիւթեր, յաճախ փոքրակալից մթնոլորտի մէջ սակայն միշտ խօսքի բացարցակ ազատութեան սահմանը միացնելով կարծիքներու փոխադարձ յարգանքի սկզբունքին:

Պոլսահայ Բանաստեղծ, Չարեհ Խրախունի, այդ հանդիպումներէն երկուքին մասնակցելով, Մարմարայի 17 Փետրուար 1998 թիւին մէջ կը ներկայացնէ իր տպաւորութիւնները հետեւեալ մեջբերուած խօսքերով.

«Սեփականատիրոջ նման լուրջ, զուսպ, հանդարտ ու վայելուչ այս տիպար հաստատութեան առաջին շէնքը, ընդունելութեան եւ նախաճաշի սրահներուն քով ունի նաեւ ամերիկեան պառով ընդարձակ սրահ մը, ուր որոշ իրիկուններ, յաճախորդները կենդանի նուագով թեթեւ երաժշտութիւն կրնան վայելել: Ահաւասիկ այդ սրահին մէջ էր՝ արեւմտեան եւ հայկական մշակոյթով սնած իսկական մտաւորական մը եղող Պր. Մկրտիչ Պուլտուքեան, ամէն երկուշաբթի երեկոյ, կը կազմակերպէ մտաւորականներու, արուեստագետներու եւ տարբեր մարզերու պատկանող ծանօթ գործիչներու հանդիպումներ: Անոնցմէ մէկուն ներկայ գտնուելու պատեհութիւնը ունեցայ, Հայաստանէն խումբ մը նկարիչներու եւ կերպարուեստի վարպետներու Պէյրութ ներկայութենէն օգտուելով, այդ գիշերուան հանդիպումը կայացաւ անոնց եւ պէյրութահայ զանազան արուեստագետներու միջեւ: Պր. Պուլտուքեան պատրաստած էր խօսակցութիւնները առաջնորդելու եւ կարգաւորելու կոչուած յայտագիր մը, որ ահաւասիկ»:

Լիբանանահայ արուեստագետներու համախմբումին հերթական հանդիպումներու տասնըերկրորդը, իր բազմակողմանի մասնակցութեամբ յարմար մթնոլորտ կը ստեղծէ, որպէսզի արծարծուին հայկական արուեստը յուզող հիմնահարցեր:

Այսօրուան զրոյցին նիւթը պիտի ըլլայ հայկական արուեստի ներկայ իրավիճակը, իր հետեւեալ ստեղծագործական եւ գործնական տուեալներով:

Ա. Կարելի՞ է սահմանել հայկական արուեստին իւրայատկութիւնները, որպէս խորք եւ ոճ:

Բ. Ի՞նչ պէտք է ըլլայ հայ արուեստագետին դերը՝ իր ապրած հաւաքականութեան եւ պատմութեան առջեւ:

Գ. Ի՞նչ դժուարութիւններ կը դիմագրաւ արուեստագետը ընդհանրապէս եւ հայ արուեստագետը մասնաւորապէս:

Տրուած ըլլալով նիւթին ընդարձակութիւնն ու բարդութիւնները, փափաքելի պիտի ըլլայ նախ ուրուագծել ընդհանուր պատկերը, եւ ապա զայն ամբողջացնել մանրամասնութիւններով, որպէսզի ցրոյցին առանցքը մնայ կայուն եւ արտայայտուող գաղափարները պահուին իրենց հունին մէջ:

Հարցումներ.

1. Որո՞նք են այն արժեքները, որոնք ձեր արուեստին կորիզը կը կազմեն:
2. Որո՞նք են ձեր ներշնչումի աղբյուրները. ընկերային իրավիճա՞կը, անձնական յոյզե՞ր, արտաքին դպրոցնե՞ր կամ շարժումնե՞ր, անձնական յեղաշրջո՞ւմ:
3. Որպե՞ս հայրենի արուեստագետներ, ի՞նչ կը ձգտիք իրագործել:
4. Որպե՞ս արուեստագետ՝ ձեզի համար ի՞նչ բանի մէջ կը կայանայ յաջողութիւնը:
5. Ին՞չ բաներ պիտի ուզէիք որ տարբեր ձեւով ընթանային ձեր ստեղծագործական կեանքին մէջ եւ հանրութեան մօտ:
6. Որպե՞ս սփիւռքահայ արուեստագետներ՝ ձեր Հայ ըլլալու հանգամանքը խթանիչ ո՞ւժ է՝ թէ արգելակ:

«Ինչպէս կը տեսնուի՝ հմուտ, գիտակից ու սրտցաւ մօտեցումով տարագրած այս հարցադրումները արժանի են կազմելու մէկէ աւելի լուրջ համաժողովներու կամ գոմէ ակադեմական մակարդակով սեմինարներու»:

Անցեալին, թիֆլիսեան հռչակաւոր «թումանեանական վերնատունը», Հալէպի «Պարոն»ը, կամ Լոնտոնի «Տը Արմինիըն Ռեսորսան»ը, ուր ոչ միայն տասնամեակներու ընթացքին իջեւանած են հայ եւ օտարազգի մեծամեծներ՝ այլ եւ դարձած են հայ գրականութեան եւ արուեստի քրմութեան տաճարներ:

«Կարտըն Թաուրը», որպէս ազատ բեմ տարբեր սերունդներու, հաւատամքներու, փորձառութիւններու, շրջանակներու պատկանող անձերու, ժամանակի ընթացքին վերածուած է աշխոյժ մտաւորական կեթրոնի մը: Իր յայտագիրին վրայ տեղ գտած նիւթերու հորիզոնը հետզհետէ ընդգրկած է տարբեր նիւթեր, ելոյթներ, դասախօսութիւններ, հանդիպումներ՝ որուն մասնակցած են Մայր Հայրենիքէն եւ Սփիւռքէն հանրաճանաչ հիւրեր, գրողներ, արուեստագետներ:

«Կարտըն Թաուրը»-ի սեփականատէր, գրող ու մտաւորական Մկրտիչ Պուլտուքեան՝ որ ճարտարապետն է մանաւանդ այս եզակի հաստատութեան՝ դարձած է այս շարժման մղիչ ոյժերէն մէկը:

Իրենց ելոյթներով արդէն իսկ լայն ժողովրդականութիւն վայելող հանդիպումները ծաղկեցուցած են Լիբանանահայ վաստակաւոր արուեստագետներ՝ բեմադրիչ դերասան Պերճ Ֆազլեան, քանդակագործ Չաւէն Խտրշեան եւ Վարուժան Մարտիրեան, ֆրանսաբնակ գեղանկարիչներ Գրիգոր Նորիկեան եւ գանատաբնակ Գրիգոր Ակոբեան, երաժշտագետ-խմբավար Յարութ Ֆազլեան, Մայր Հայրենիքէն հանգուցեալներ մեծ բանաստեղծ Գեորգ Էմին եւ արձակագիր Հրանդ Մաքետոսեան, ջութակահար Ճենտերեճեան եղբայրներ, «Ոզնի» երգիծաբերքի «ամենահաս» խմբագիր Արամայիս Սահակեան, արուեստաբան Շահէն Խաչատրեան, ակադեմիկոս փիլիսոփայ Գեորգ Բրուտեան եւ Տոքթ. Խրլոպեան, Լուսանկարիչ Շիրազ, արուեստաբաններ Լեւոն Թորոսեան եւ Մովսէս Հերկելեան եւ բազմաթիւ այլ հիւրեր:

Մկրտիչ Պուլտուքեան իր պանդոկի համացանցային կայքէջին մէջ www.gardentowerhotel.com/MondayForum.htm, անձնապէս ստեղծած է եւ տեսական կ'այժմեականացնէ Լիբանանահայ նկարիչներու նուիրած համացանցային նկարչական ցուցահանդէս մը, ընդարձակ տեղեկութիւններ տալով անոնց ստեղծագործական

աշխատանքներուն մասին:

«Կարտրն Թաուրը», միաժամանակ եղած է հաւաքավայրը՝ բազմաթիւ այլ Լիբանանահայ միութիւններու որոնց կարգին կարելի է յիշել Լիբանանի Հայ Գործարարներու Միութիւնը, «Հայճար» ճարտարագէտներու ու ճարտարապետներու Միութիւնը, Հայ Գրողներու Միութիւնը, Հայ Ոսկերիչներու Միութիւնը եւ զանազան հայրենակցական միութիւններ:

«Կարտրն Թաուրը»ի կազմակերպուած են բազմաթիւ մամուլային ասուլիսներ՝ նուիրուած Արցախի, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամին, Հայրենի եւ Լիբանանահայ գործարարներու գործակցութեան:

Բազմաթիւ առիթներով, պանդոկը հիւրընկալած Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ժողովներուն մասնակցող Պատուիրակներ, կրօնական, ազգային եւ քաղաքական բարձրաստիճան անձնաւորութիւններ, Հայաստան-Լիբանան տնտեսական ֆորումի մասնակիցներ եւ օտար դեսպաններ: Մէկ խօսքով, «անխուսափելի» կանգառ մը, ուր կը խաչաձեւեն հայ թէ օտար «հոռմներ»:

Ըստ շումերական թէ հայկական առասպելներու՝ Բաբելոնի կախումը պարտէզները, կամ Շամիրամի աշտարակ - պարտէզները կառուցուած հայոց Արքայ, տարաբախտ Արա Գեղեցիկին սիրոյն համար՝ իր «լիբանանեան» տարբերակը կարող ենք գտնել այստեղ, «Աշտարակի Պարտէզ» անուանակոչութեան հետ "*Garden Tower*", ուր Պէյրութի արուարձան Անթիլիասի այս կանաչապատ ու գեղատեսիլ վայրին մէջ, նոյնպէս պատշգամներուն վրայ ունենալով «կախումը պարտէզներ»՝ վեր կը բարձրանայ ոչ միայն եզակի կառոյց մը, այլ երբեմնի Սփիւռքի մայրաքաղաք Պէյրութի պատմութեան մէջ անջնջելի հետքեր թողած հայ դպրութեան, արուեստի, ու հայրենասիրութեան մնայուն հասցէ մը:

ՀԱՄՕ ՄՈՍԿՈՖԵԱՆ
Պէյրութ, 2003